րից հնագույնը պատկանում է 1225 թվականին (արձ. 139)։

Ճիշտ է, սրահի արևելյան ծայրին, պատի մեջ հագցրած վիճակում կա նաև 1161 թվականին վերաբերող դեղնավուն քարից շինած մի խաչքար (արձ. 111), բայց այն հավանաբար այս նախագավթի շինությունից առաջ գոյություն է ունեցել և կանգնեցված է եղել հենց այդ տարածության վրա, ուստի նախագավթի շինության ժամանակ նրան հանել են իր տեղից և հագցրել կառուցվող նախագավթի պատի մեջ։ Դա երևում է նրանից, որ խաչքարն իր նախնական տեղում չի և չի համապատասխանում այն լուսամուտին, որի հետ նա զույգ է կազմում սրահի արևելյան պատին։ Այս նախագավիթը, ամենայն հավանականությամբ, կառուցվել է 13-րդ դարի առաջին քառորդին։

10. Զաքարյանների տոհմական տապանատուն։ Կազմված է երկու մասից, արևմտյանը երկթեք տանիքով, թաղածածկ մի շենք է, որ այժմ զգալի կերպով թաղված է

Նկ. 14. Գրատունը և Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին հս աև կողմից։

հողի մեջ, իսկ արևելյանը ավելի նեղ դիրքով շինված մի տապանատուն է, որի ստորին հարկը, այսինքն բուն տապանատունն իր ավելի ցածրադիր ծածկով, ներքուստ միացած է տապանատան արևելյան մասի հետ։ Արևելյան մասն ունի վերին հարկ, որը մի փոքրիկ մատուռ է։ Տապանատունը կառուցված է 1189 թվականին Զաքարե և Իվանե եղբայրների կողմից իրենց հոր՝ Սարգսի գերեզմանի վրա, որ մեռել էր 1187 թվականին։ Այդ նույն թվականին պատկանող մի խաչարձան է դրված Սարգսի գերեզմանի գլխին։

Տապանատունն ունի կառուցման արձանագրություն (արձ. 165), բացի այդ, «Քոթուկի» մեջ էլ պահպանվել է Զաքարեի և Իվանեի մի հրովարտակը, որով նրանք 1184 թ. իրենց տոհմական գերեզմանատանը, նախքան իրենց հոր մահը, նվիրել են հետևյալ գյուղերը.

«ԶՈռնակն և զՈռնակայ գոմն, զՎաշխն և զՎաշխայ սեռն*, զԴարքն և զՆորաշէնն, և զՀալալշէնն ամենայն խարճէ ազատ ի պատրողական ցեղէ»[1]։

Նույն հրովարտակի շարունակության

[1] «Քոթուկ», էջ 56։

* Նույն հրովարտակի մեջ այս երկու տեղանունները գրված են՝ Վաշն և Վաշայսեռն։